ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 31 մայիսի 2019թ.

2019 թվականի հունիսի 03-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Բյուրեղավան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» որոշման նախագծի թեմայով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Բյուրեղավան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին

համայքնի ավագանու որոշման նախագծի քննարկում:

Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ նախագիծը մշակվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածի հիման վրա, ըստ որի համայնքի ղեկավարն իրականացնում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումը: Համայնքի ղեկավարը հաշվառումն իրականացնում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում, որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների: Ավագանու որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները կարող են լինել փաստաթղթային կամ էլեկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով): Ներկայացվող կարգով սահմանվում է տեղական տուրքերի հաշվառումը կատարել էլեկտրոնային եղանակով՝ Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով, իսկ տեղական վճար վճարողների հաշվառումը՝ փաստաթղթային եղանակով:

Որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արման Խանզադյան

Արտյոմ Ավագյան